

դէմ, որպէս զի կրկին տիրեն վերջինի խլած երկիրներին, բոլոր Արարատեան նահանգի Հայերին մեծ մասամբ բռնի գաղթեցրեց Պարսկաստան, թէ օտմանցւոց յաջողութեան առաջն առնել ցանկալով, որպէս զի նորա ամայացեալ Արարատեան աշխարհում ոչինչ չգտնեն և թէ նոյն իսկ Պարսկաստան ծաղկեցնելու համար Հայերի ձեռքով, որոնք լաւ երկրագործ արհեստաւոր և վաճառական ժողովուրդ էին: Մանրամասնաբար նկարագրած է այս անցքը Առաքել պատմագիրն, որ ցանկացողք կարող են կարգալ և տեղեկանալ:

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.

ԱԵ.

Հասարակ ժողովուրդ և նորա եկեղեցին. երբեք և Հարաբերի ժողովուրդ. վերջինս աւելի եկեղեցին. Ղուշաբան. նորա պատմութիւնը. աւելի Ասորի-ժողովուրդ. եկեղեցին. Տէր Ասորի վերաբերւելիւն. Ալաբերդի հայա-նապատեցը, նորա միջին-ժողովուրդը, շրջապատ տեւաբանը. ճարտար-դպրութիւն:

Հասանի գիւղից Հոստուն գիւղը գնալիս մենք անցնում ենք Ալաբերդ գետի հոսանքին հակառակ, նորա երկու ափը զարդարող գեղեցիկ ծառաստանների միջով: Նառ չանցած՝ մենք հասնում ենք այն տեղ, ուր Գե-Մե-Ղ Բուր-Ղ գետակը խառնու-ւում է Ալաբերդ գետի հետ: Խառնուրդը անցած, վարելահողերի սահմանում մեզ հանդիպում է փոքրիկ սրբատաշ քարից շինած եկեղեցի, որի ծածքը շատ հնուց խոնարհուած է և որի մէջ՝ իրրեւ պահպան կանգնած է մի բարձր ընկուզենի:

Հոստուն գիւղը, որ գրած է գետերի խառնուրդից քիչ վեր, Ալաբերդ գետի աջակողմեան ափի վերայ, շրջապատած է մեծամեծ քարակոյտներով: Փողոցները նեղ, ուր սուր, նոյնպէս քարակոյտների մէջ: Գիւղը բոլորովին թրքաբնակ է, աղտոտ և անճոռնի տներով: Իբրեւ հայկական մնացորդ՝ գիւղի մէջ այսօր ևս կանգնած է մի սագաշէն մեծաղիր աւերակ եկեղեցի: Նո-րա կամարաշէն տանիքը ամրացած է չորս քառանկիւնի սիւնե-րի վերայ, իսկ պատերի մէջ աջ և ձախ հագցրած են այլ տեղից

առած շատ տապալանքներ և խաչքարեր: Նա ունի քսան քայլ երկարութիւն և տասնեւհինգ քայլ լայնութիւն, մի դուռ դէպի հարաւ, որի առաջ մի քանդուած լայնածոց գաւիթ: Սեղանի երկու կողմում կան մի մի խորան, մի աւազան հիւսիսային պատում: Լուսամուկները և տանիքի արեւմտեան կամարները սակաւ առ սակաւ քայքայւում են թէ ժամանակի և թէ բնակիչ թուրքերի ձեռքից: Թուրքերը դարձրել են եկեղեցին ոչխարանոց: Եկեղեցու անունը, շինութեան տարին յայտնի չէ, բայց երևում է որ հին չէ:

Եպիսկոպոս Սրբելեանը պատմելով Մարտիրէի և Նորա ընկերակիցների նահատակութեան մասին Անգեղձորում, շարունակում է թէ Աթաշխուդայ Պարոնից իշխանի զօրքը «ասպատակ եղեալ հասին և երեք հարիւր արանց ի Զրկիցն որ Ոսթիւն կոչի և Արաքսի» *): Այժմեան աշխարհագրական դիրքը աչքի առաջ ունենալով՝ պէտք է ընդունել, որ Զրկիցն է Ալագեազ գետի և Գիւմրիւշ Բուլաղի խառնուրդը, իսկ Ոստինքը այժմեան Հոստունն է, և Արտարոյնքը—Էրզափինն է: Յաղաքարի վանքի մօտ սուրբ Աստուածին եկեղեցու մի արձանագրութեան մէջ, 660 հայկական թուականին, ոմն Սմբատայ որդի Գրիգոր անուանում է իւրեան՝ տէր Ոստին: Այսպէս ուրեմն հին պատմական Ոստինքն է այժմեան Հոստունը:

Հոստունից շարունակելով ճանապարհս՝ ես առաջս կունենամ երկու ուղղութիւն, մինը դէպի աջ՝ Ալագեազ գետի փերով, միւսը դէպի ձախ՝ Գիւմրիւշբուլաղի փերով: Ես ընդունում եմ վերջին ուղղութիւնը, որի կատարելից յետոյ, կրկին վերադառնալով Հոստուն, կշարունակեմ ճանապարհս այստեղից դէպի Ալագեազ:

Այս երկու գետի մէջ տեղ, Հոստունին բաւականաչափ մօտիկ, իմ առաջս ահա կանգնած է հիւսիսից—հարաւ ձողուող ժայռապատ լեռան սուր անկիւնը: Նորա գլխին զետեղած է Ալագեազի բերդը, իսկ սուր անկեան տակը միանում են Ալագեազից և Էրզափինից եկող ճանապարհները: Դէպի արեւելք, մօտակայ Ալագեազ գետի ձախ ավիւմ՝ երևում է Ղազարի այգէտեղին: Իսկ երկու գետակի փերը զարգարուած են գե-

*) Պատմ. Օրբէլ. զԼ. ԺԹ.

ղեցիկ ծառաստաններով, մանաւանդ Վիւմիւշ բուլաղի տփերը: Այդ ծառերի շարքում հսկայածե կանգնած են թանձր ընկուղենիք, որոնց բարձր ստուերի միջով, գետին կից՝ ես քայլ առ քայլ մօտենում եմ՝ Երզալին գիւղին:

Այդ գեղեցկագիր գիւղը դրած է Վիւմիւշբուլաղի աջ ափի վերայ, ձորի մէջ, որ կազմուած է արեւելեան կողմից Ալագեազի բերդի լեռնով, իսկ արեւմտեան կողմից միւս լեռնագօտիով: Ձորը հարաւից աստիճանաբար բարձրանում է գէպի հիւսիս և առաւել ևս զարգարում է ծառերով, խոտերով, գոյնըգոյն ծաղիկներով և լեռներով:

Երգափինը գեղեցիկ գիւղերից մէկն է: Իբրեւ հայարնակ գիւղ՝ զարգարում է խաղողի և պտղատու ծառերի այգիներով, որոնց մէջ մեղրանոցներում զարսուած են ոչ սակաւաթիւ փեթակներ: Վիւղացիք զալթել են պարսկաստանի Խոյ գաւառի Խոյանայ գիւղից և այժմ՝ կազմում են 126 արական և 136 իգական, բաժանած 28 գերդաստանի:

Աւրիմն այդ գիւղը, ինչպէս վերը յիշեցի, Օրբելեանի պատմութեան Արփաշին գիւղն է, որ գեռ ևս 816 հայկական թրւականին արտասանւում էր Արփաշին, որպիսի անուն յիշուած է Ղօշալանքի սուրբ Աստուածածին եկեղեցու պարսպապատի արձանագրութեան մէջ: Իսկ վերջին ժամանակներում նա սկսել է կոչուել Երփաշին: Թէև նա պատմական գիւղ է, բայց այժմ նա ոչ մի արժանայիշատակ շինութեան հետք չէ ներկայացնում, բացի մի փոքրիկ քարաշէն մատուռից հիւսիսային սարալանջում, այն ևս վերջին ժամանակի շինութիւն:

Վիւմիւշբուլաղ գետակի ծաղկալիթիթ եղրով բարձրանում եմ գէպի հիւսիս և երեք—չորս վերստ չանցած, գետակի ձախ եղրի մօտ, հանգիստում եմ երկու—երեք՝ միմեանց մօտ՝ կրախառն երկաթեայ հանքային առատ աղբիւրներ, որոնք իւրեանց շուրջը շերտ շերտ դասաւորում են կրային մասերը: Տեղական ժողովուրդը շատ հաղիւ է գործադրում այդ ջուրը իւր բժշկական պէտքերի համար, իսկ ի շխանութիւնը նորանց գոյութիւնն անգամ չգիտէ:

Հինգ վերստաչափ ևս անցած ես հասնում եմ մի տաճկաբնակ գիւղ, հայկական հին աւերակների վերայ հիմնուած, մի սրանչելի սարալանջի գագում: Վիւղի այժմեան անունն է Հոյ-

Բաբել, որի հնատեաց բնակիչները աշխատում են անհետացնել հայկական յիշատակների թշուառ մնացորդքը: Սորա հիւսիսային կողմում կան երկու գերեզմանատուն անարձանագիր տապանաքարերով: Ահա և մի ձիթահանք իւր քանդուած պատերով և բոլորակ վիթխարի քարով:

Գիւղի մէջ տեղ երևում է քարաշէն եկեղեցին իւր խոնարհուած կամարակապ առաստաղով: Նա շինուած է եղել չորս սիւնների վերայ մի հարաւային դռնով: Այժմ կանգնած են միայն քեմի պատերը և հիւսիսային առաստաղի կամարը: Իսկ միւս մասերը կամաց կամաց անհետանում են: Պատերի մէջ աջ և ձախ դրած տապանաքարերը և խաչքարերը այստեղ ևս նշմարելի են: Եկեղեցին շինած է 1692 փրկչական թուականին Գաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետաց անունով, ինչպէս հաւատարմացնում է մեզ աւազանի կամարի վերայի հետեւեալ արձանագրութիւնը: « Շնորհաբ ամենագօրին Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ի թուականի մարդեղութեան բանին Աստուծոյ ՌՈՂԲ (1692) ի հայկական տումարի ՌՃԽԱ (1141) շինեցաւ սուրբ եկեղեցիս յանուն սրբոց հրեշտակապետացն Գաբրիէլի և Միքայէլի »:

Մի ամբողջ քար, որի մէջ փորուած է աւազանը, ներկայացնում է այս արձանագրութիւնը. « կանգնեցաւ աւազան սուրբ մկրտութեան հոգւոյ և թողութեան մեղաց..... » (վերջը եղծուած): Չնայելով որ մեղանից մօտ ժամանակ եղած է այստեղ հայ բնակութիւն, մենք այստեղ անայնիւ չգիտենք թէ գիւղը ունեցել է այլ անուն թէ կրել է ներկայ անունը:

Հորբաղիից վեր այլ ևս զննելու նիւթ չկայ, ուստի վերագառնում եմ նոյն ճանապարհով նորից դէպի Գիւմիւշ բուլաղի ձորը, անցնում եմ այդ գետակը հանքային ջրերի մօտից՝ նորա ձախ արև: Ճանապարհս աստիճանաբար բարձրանում է արտերի, ծառատանի և մացառների միջից դէպի վեր, դէպի բարձր սարը, որի հարթ, լայնանիստ գագաթը ծածկուած է մացառներով և գունտուոր ծաղիկներով: Նրեք վճիտ աղբիւր ոռոգում են այդ բարձրաւանդակը:

Հէնց այստեղ, այդ աղբիւրի գլխին, այդ ծառի տակ, այդ խոտերի և ծաղիկների մէջ կանգնած դուք նայեցէք դէպի հարաւ և հիացէք բնութեան սրանշելի տեսարանով: Առաւօտեան

արեւը նոր բարձրացել է թեւադռնիցս լեռան սրածայր գագաթից և իւր ճառագայթներով խաղում է միլիոնաւոր ծաղկանց ցոլի մէջ։ Աջ և ձախ խորխորատի յատակում, գրած են այգիներով շրջապատ երգափինը և Ալագեազը, իսկ սոցա երկուսի մէջ բարձրացրել է իւր մէջքը դէպի ամպերը միահագին երկայնաձիգ, ժայռապատ բլուր, իւր վերայ կրելով Ալագեազի Բերդը։ Եւ այսպիսի բարձրութեան վերայ իրրեւ պահապանը կանգնած են սուրբ Յովհաննէսի և սուրբ Կարապետի վանքերը, որոնք միմեանց մօտ զոյգ երեւալու պատճառով կրում են տաճրիկների նոյն և հայերից Առաքիլ անունը։ Ճանապարհը դէպի Առաքիլն ունի բաւականին դժուարութիւն։

Սկսենք սուրբ Յովհաննէս վանքից։ Սա փոքր է և շինած է նուրբ սրբատաշ քարից. ունի միակ արեւմտեան դուռը և տանում է եկեղեցու գաւթիժը։ Այդ դրան վերը, արտաքուստ, շարուած են հայր Աարդկայ արձանագրութիւնների տողերը։ Սորանից վեր կանգնած է մի գմբեթաձև շինութիւն, մէծը փոքրիկ խորան, իսկ հիւսիսային և հարաւային կողմերում կան կանգուն երեք արշինից բարձր մի մի զարմանալի գեղեցկաքանդակ խաչքարեր անարձանագիր և անթուական։ Սորանի վերայ եղել է չորս կլորիկ սիւնների վերայ մի գմբեթ, որ այժմ խոնարհուած է։

Յիշեալ խորանի դուռը բացւում է դէպի հիւսիս, գաւթի տանիքի վերայ, իսկ խորանի մէջ դուռ տեսնում էք մի փոքրիկ բեմ, իւր փոքրիկ վեմ քարով։ Սուրբ Յովհաննէս եկեղեցու տանիքը ծածկուած է սրբատաշ սալերով։

Մանենք այժմ գաւթի մէջ, նա փոքրածաւալ է և ունի արեւմտեան պատի վերայ, ներքուստ, հայր Աարդկայ արձանագրութիւնը 710 հայկական թուականից, որով նա ընծայում է սոյն եկեղեցուն այգի և այլ շատ իրեղէնք։ Իսկ հարաւային պատի վերայ ոմն Մարտիրոսի անթուական արձանագրութիւնը, որ նուիրում է սուրբ Յովհաննիսին հայրենեաց հոյն եղէգնիսում։ Գաւթից մտնում եմ փոքրիկ եկեղեցու մէջ։ Նորա սալած յատակը ծածկուած է անասնոց արտահոսութեամբ և չոր խոտով, ըստ որում Ալագեազ գիւղի թուրքերը պահում են այդ տեղ անասուն։ Եկեղեցու պատերը չունին արձանագրութիւն։ Գեղեցիկ բեմը և վեմ քարը ամբողջ են դեռ ևս։

Սորանից դէպի արեւմուտք, 30 քայլաչափ հեռու, կանգնած է սուրբ Կարապետի չքնաղ եկեղեցին, որ գմբեթայարկ է և սրբատաշ կարմրաւուն քարից: Արեւելեան և արեւմտեան լուսամուտների արտաքին շուրջը զարդարած է ծաղկահիւսնկարներով, իսկ հիւսիսային պատի վերայ մի սափէնաչափ ամբողջ քարի վերայ քանդակած է կատաղի առիւծ, ուղիւ աղեղնաձև լարած մէջքի վերայ, առաջի թաթերով սղմել է և կամենում է կեղեքել շուստուցած ցուլին: Հարաւային պատի վերայ քանդակած է մի արծիւ, թեւերը բացած և մագիներում գառը սղմած: Արհեստ՝ որ արծուի գլուխը կոտրուել ընկել է:

Այս եկեղեցու տանիքի և գմբեթի սալածածքը թէև ըստ մեծի մասին ամբողջ է դեռ ևս, բայց և այնպէս տեղ առ տեղ թափուել են սալերը, մանաւանդ գմբեթի հարաւային կողմից, ոակայն առատադը դեռ չէ ծակուել:

Երբ մենք կանգնած վանքի միակ հարաւային դրան առաջ նայում ենք դէպի վեր, տեսնում ենք դրան վերը արձանագրութիւն որ անձրեւից և այլ պատճառներից մոշուել եղծուել է: Նշմարելի են միայն այս բառերը: . . . Տէր Աստուած, ողորմեա Գագկայի քում գալստեանդ և պահեա՛ . . . :

Սորա տակը երևում է մի նկար, ուր սրթի ճիւղերը աջ և ձախ միմեանց յարելով՝ զուգընթացաբար ձգւում են և նորանց կազմած վանդակների մէջ զետեղուած են խաղողի ողկոյզներ: Իսկ այս նկարի տակը տեսանելի է հայր Վարդկայ անկոյզներ: Իսկ այս նկարի տակը տեսանելի է հայր Վարդիկը, խընդրումէ իւրեան ժամ պատարագ: Մեր աջ կողմը, դրան առաջ, կան ահա միաշար երեք անարձանագիր կանգուն խաչքարեր և ցան ու ցիր խաչքարերի բեկորներ:

Այժմ մոռնե՛ք վանքի ներսը: Նա շինած է չորս նրբատաշ որմնափակ սիւնների վերայ, որոնք վերը միանում են կամարներով: Գմբեթը գօտէորած է կարմիր ներկած ծաղկահիւսնկարով: Յատակը սալած է ու ծածկուած է ձիւս թրիքով: Ունի չորս խորան իւրեանց բեմիկով ու վէմ՝ քարով, երկուսը առաջին ու երկուսը յետին դասում: Աւագ սեղանի բեմը բոլորովին ամբողջ է և ճակատի վերայ քանդակած են հինգ հատ սափոր, չրթանց մի մասը թեքուած դէպի մի կողմը: Երկու կողմից ևս չորս աստիճան բարձրացնում են դէպի

բեմը, որի վերայ երևում են կրակատեղեր և ածուխի մնացորդներ:

Դրան գլխին, հարաւային պատի վերայ՝ երևում է Ցարսայիձ իշխանի կարմրաներկ տառերով արձանագրութիւնը, 700 հայկական թուականից: Առաջին դասի խորանների դրանց գլխին կան մի մի զեղծուած արձանագրութիւն. իսկ հիւսիսային պատի երկու զեղծուած արձանագրութիւններից պահպանուել է արձանագրողի միայն անէծքը: Այս նկարագրած երկու վանքերի շուրջը ծածկուած է տապանաքարերով, խաչքարերի բեկորներով և պատերի պոկուած քարերի կոյտերով: Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը իւր պատմութեան մէջ՝ վայոց ձորի վանքերի կարգումը յիշում է և Յաղացքարի սուրբ Կարապետի վանքի մասին այսպէս. «Յաղացքար՝ բարձրահռու-
«չակ և սուրբ առաքինարան յորում ի 490 թուականին ի
«թագաւորութեանն Գագկայ, հայր ոմն վանիցն Վարդիկ ա-
«նուն շինէ պայծառ եկեղեցիս երկու ի հանգստարանի առա-
«ջին սուրբ հարցն, զմին գմբեթայարկ յանուն սրբոյ Կարա-
«պետին, և զմիւսն սագաշէն, հրաշալի յօրինուածովք:» *)

Օրբելեանի այս խօսքերից երևում է որ գմբեթայարկ եկեղեցին կոչւում էր սուրբ Կարապետ, իսկ միւս սագաշէնի անունը չէ յիշում: Այժմ գմբեթաւոր եկեղեցու դրան վերի, արտաքին կողմից, հայր Վարդկայ արձանագրութիւնը հաստատում է, որ Օրբելեանի յիշած սուրբ Կարապետի եկեղեցին պէտք է լինի սոյն այս գմբեթաւորը: Արձանագրութիւնը, որ Ջալալեանի գրքի մէջ աղաւաղած է, ասում է վերջում. «Այլ
«սուրբ Կարապետս արդ որ սուրբ Սարգիսոյ աւր այս հինգ
«եկեղեցումս ժամ Վարդկայ չառնողն ի սուրբ Կարապետէս
«եղիցի նշովեալ, իսկ առնելին օրհնած է յԱստուծոյ:» Միւս փոքրիկ եկեղեցու անունը՝ իբրեւ սուրբ Յովհաննէս՝ յիշուած ոմն Մարտիրոսի արձանագրութեան մէջ՝ նոյն եկեղեցու գաւթի ներսը՝ հարաւային պատի վերայ: Օրբելեանի բերած 490 հայկական թուականը, կամ 1041 փրկչական թուականը, իբրեւ եկեղեցիների հիմնարկութեան սկիզբ, ոչ մի մեզ հասած արձանագրութեանց մէջ չէ յիշուում: Թէ և հայր Վարդ-

(*) Օրբելեան պատմ. գլ. ԿԴ.

կայ անունը յիշատակւում է մի քանի տեղ:

Եւ այսպէս՝ պատմութիւնից եւ արձանագրութիւնից երեւում է, որ Յաղացքարի սուրբ Կարապետի եւ սուրբ Յովհաննիսի եկեղեցիների հիմնողը եւ առաջին առաջնորդը եղել է ուն հայր Վարդիկ: Իւր մասին հայր Վարդիկը սուրբ Յովհաննիսի գաւթի՝ դրան արտաքին կողմի արձանագրութեան մէջ ուղղակի յիշում է: « Ես հայր Վարդիկ, առաջնորդ սուրբ ուխտիս Յաղացքարի շինեցի զսուրբ Կաթողիկէ: » Այս իսկ արձանագրութեան մէջ հայր Վարդիկը իւր հոգւոյ փրկութեան համար գնումէ սուրբ Երրորդութեան նշանը, որպէս զի ողորմութիւն գտնի ապագայում, տիեզերակալ հրուարակի մէջ ուր խօսքերը սպառւում են եւ գործքերը թագաւորում եւ սորա համար հայր Վարդիկը պահանջում է սրբազարդ քահանաներից թէ « որ զսուրբ պատարագն համարձակ մատուցանէք, զիս յաղաթս յիշեցէք առաջի զենոյն Գրիստոսի եւ քանի վանքս ի հաստատութեան է՝ ամեն շաբաթ օր զայն ինձ առնէ այն քահանայն, որ ի սմա պատարագ մատուցանէ: » Հայր Վարդիկը որտեղից է գալիս այստեղ, քանի ժամանակ է առաջնորդութիւն անում Յաղացքարում, ե՞րբ է մեռնում եւ ո՞ւր է թաղւում, այդ բոլորը պատմութիւնը չէ յայտնագործում:

Ստեփաննոս Տարօնեցի՝ Ասողիկ պատմաբանը, հակառակ վերոյիշեալ պատճին, հաստատում է որ « Յախացքար ի Վայոց ձորի ի ձեռն հօր Ստեփաննոսի (այսինքն շինեցաւ: *) Ուրեմն Յախացքարի վանքերը, Ասողիկի հաստատութեամբ, շինուած են ոչ թէ հայր Վարդիկայ, այլ հայր Ստեփաննոսի ձեռքով: Այս հիման վերայ, սոյն հանգամանքի մասին պընդում է եւ Ինճիճեան ասելով որ առաջին հիմնադիրը եւ վահագայրը Յախացքարի վանքի էր Ստեփաննոսը 10 երորդ դարում, Անանիա Կաթողիկոսի օրով, իսկ հայր Վարդիկը 1011 թուականին իւր նորոգող էր եւ ոչ հիմնող: **) Նկատելի է այստեղ, որ ուղիղը գուցէ Յախացքար է եւ ոչ Յաղացքար:

(*) Ասողիկ գլ. է:

(**) Ինճիճեան Ստորագր. Հայաստանի երես 260:

ինչպէս գործ է ածուել վերջերումը արձանագրութեանց մէջ:

Օրբելեանի բերած 490 թուականից ուղիղ 220 տարի յետոյ, այն է 710 հայկական թուականին՝ հայր Վարդկայ անունը կրկին անգամ յիշուած է այս գաւթի արեմտեան պատին ներսի կողմի արձանագրութեան մէջ՝ իւր նուիրատուութեանց մասին: Հաւանական է որ նոյն վանքում զանազան ժամանակ եղած են երկու հայր Վարդիկ:

Յախացքարի վանքը, ինչպէս երևում է նորա արձանագրութիւններէից, իւր ժամանակ ունեցել է հետեւեալ իրեղէնները և կալուածքը: Վերջին հայր Վարդիկը յիշեալ արձանագրութեամբ նուիրում է վանքին Բվեայ մարգր, Սեդայի այգին և այլ շատ իրեղէնք: Գաւթի հարաւային պատի արձանագրութեամբ՝ ոմն Մարտիրոս ընծայում է վանքին Եղեգնիսում գտնուած իւր հայրենի հօլը Փարսպայի անունով: Սուրբ Կարապետի ներսը հարաւային պատի վերայ դրան գլխին, իշխան Տարսայիճը հայկական 700 թուականին թողել է մի արձանագրութիւն, որի մէջ նախ և առաջ յայտնում է, որ նորա եղբայր Սմբատ արքայն իշխեցող էր Բարգուշատից մինչև Գառնի և Երասխ, ապա նուիրում է սոյն ուխտին սպասներ, Յախացքարի հօղն, Գեղարքունիքում Գառնի գիւղն, և Մճռակաձորում իւր ձեռատունիկ այգին: Այդ միջոցում առաջնորդ վանքում լինում է Տէր Գրիգորը, որ միւս միաբանների հետ ընդունելով այդ առատ տուրքերը, սահմանում են տարին երկու օր պատարագ, մինը Տարսայիճին, միւսը նորա երկրորդ կնոջը՝ Մինայ Խաթունին:

Այս ընծայաբերութեանց մասին յիշում է և Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը իւր պատմութեան մէջ: « Եւ (Տարսայիճ) և ի վանսն Յախացքարոյ գիւղ ի Գեղարքունի զԳառնակերն և այգի մի ի Մաճռակայ ձորի և գրէ ինքեան արձան ի վերայ սրբոյ Կարապետին: » *)

Եթէ սուրբ Կարապետի վանքից ուղղուենք մօտ երկու հարիւր քալ դէպի արեմուտք, մենք կհանդիպենք սուրբ Աստուածածնի աւերակ եկեղեցուն: Նախ և առաջ մեզ կերևայ

(*) Օրբելեան պատմ. նահանգին Սխական գլ. ԿԶ.

երկայն պարիսպը եկեղեցու արևելեան կողմում, որի հարա-
ւային ծայրի մօտ բացւում է սրբատաշ կամարակապ մեծ դու-
ռը և սա իւր կամարի վերայ ունեցել է փոքրիկ խորան կովա-
ծոյ քարից, այժմ կիսով չափ խոնարհուած: Դրան պատուան-
դանի հիւսիսային պատի ճակատը ծածկուած է արձանագրու-
թիւններով, որոնք տպագրուած են եպիսկ. Զաւախանի ճանա-
նապարհորդութեան մէջ: *) Դարպասից աջ և ձախ կանգնած
են մի մի եկեղեցի: Զննենք աջակողմեանը՝ հիւսիսայինը:

Ահա երկու կողմից ևս երեք երեք կամարափակ սիւնների վե-
րայ կամարակապ առաստաղով շինութիւն, որ ունի մի սեղան
խորհրդի իւր վէմ քարով: Սորա յատակը ծածկուած է ձիանց
և ոչխարի արտահոսութիւնով, ըստ որում Ալագեազ գիւղի
թուրքերը պահում են այդ տեղ իւրեանց հօտը: Դիզուած աղ-
բը քրքրելով ահա բացուեցին շատ անարձանագիր տապանա-
քարեր, որոնց մէջ ամբողջովին մնացել է Ուքանի տապանաքա-
րը և վրան հետեւեալ արձանագրութիւնը: « Զաղնիւն յընո-
րեալսն ու զքաջն ի զօրականսն զպարոն Ուքանն յիշեցէք
թուին 226. (775) »: Տեսնելով որ գեղեցկաքանդակ այս արձա-
նագրութիւնը անխախտ մնացել է լոկ արտահոսութեանց շը-
նորհիւ, ես մեծ հոգացողութեամբ նորից ծածկեցի տապանա-
քարը թրիքով: Այսպէս է մեր հնութիւնների անտէր անտիրա-
կան վիճակը, որ պէտքէ արտահոսութեանց տակ թափնելով
պաշտպանները նորանց:

Այս կամարակապ շինութիւնը, որի արեւմտեան կողմը բոլո-
րովին քանդուած է, հաւանական է որ լինի նշխարանոց: Սորա
հիւսիսային պատին կպած է մի սաքաշէն կամարակապ եկեղե-
ցի, չորս որմնափակ սիւնների վերայ, առաստաղը խոնարհուած:
Նա ունի չորս խորան՝ պատարագ մատուցանելու՝ երկերկու
առաջին և յետին դասում: Առաջին դասի հիւսիսային խորա-
նը բացւում է ուղղակի աւագ սեղանի վերայ: Եկեղեցւոյ հա-
րաւային դուռը բացւում է դէպի յիշեալ նշխարանոցը, իսկ
արեւմտեանը—դէպի լայնանիստ նոյնպէս կամարափակ չորս
չորս միաշար սիւնների վերայ կամարով կառուցած գաւիթը, որի
առաստաղը արդէն խոնարհուած է: Յիշեալ դարպասի հարա-

(*) Զաւալ. ճանապարհ. հատ. Բ. երես 162—163:

ւային պատին կպած է մի այլ բարձրակամար սագառչէն եկեղեցի չորս որմնափակ սիւների վերայ, որի կամարաձև առաստաղը արդէն խոնարհուած է: Սա հարաւային կողմից ունի երկու խորան իւրեանց սեղաններով: Եկեղեցու արեւմտեան դուռը տանուիէ դէպի գաւիթը, որ բացւում է նոյնպէս դէպի արեւմուտ:

Եկեղեցու դրան վերը՝ արտաքուստ՝ երեւում է մի արձանագրութիւն հասարակ տառերով, կարմիր ներկած: « Թ. ՈԿ. (660) Ես Գրիգոր որդի Սմբատայ, Ոստնի տէր, երկու դռնիս տնկեցի ետու ի սուրբ Յովհաննէս գրեցաւ ի տարին ԺԲ. օր Ժամ պատարագ, որ գրոյս հակառակ ՅԺԸ հայրապետաց նշովեալ եղիցի: » Այս բոլոր շինութիւնները, բացի դարպասը, կառուցուած են հասարակ կոպտատաշ քարերից, բայց կրաշաղախ:

Եկեղեցիների շուրջը կան տների աւերակներ, կրապատ հորեր ու մի ձեթահանք իւր բոլորիկ քարով, որ ընկած է մեծ եկեղեցու հիւսիսային պատից դուրս: Ալագեազ գիւղի թուրքերը յիշեալ տների աւերակներում կանգնեցնում են այժմ գոմեր իւրեանց անասունների համար, բայց քանի դեռ նոքա պատրաստ չեն, ուստի ոչխարները գիշերում են եկեղեցիների մէջ:

Այս եկեղեցու հիմնարկութեան տարին մեզ անյայտ է, բայց, ինչպէս ցոյց է տալի յիշեալ դարպասի պատուանդանի արտաքին կողմի արձանագրութիւնը, եկեղեցու անունը Աստուածածին է և նորոգուել է 671 հայկական կամ 1222 փրկչական թուականին ոմն Գրիգորի ձեռքով, որ գուցէ նոյն իսկ Սմբատայ որդի Գրիգորն է, Ոստն գիւղի տէրը, որ յիշւում է 660 թուականի արձանագրութեան մէջ, նոյն դարպասի հիւսիսային պատի վրայի արձանագրութիւնից երեւում է որ 766 թ. (1317) Պաօշ իշխանի թուր, Եսէի, միաբանուել է Յախաց քանդի սուրբ ուխտի հետ և հայրենի Սրկղունի գիւղում իւր ձեռատուէկ նորակերտ այգին իւր ջրովը ընծայել է եկեղեցւոյս:

Այս նկարագրած ժամանակից մինչև մեր օրերը թէ ինչ վիճակ ու դրութիւն են ունեցել այս վանքերը՝ մեզ յայտնի չէ: Սակայն Էջմիածնի Սրբազան Սինօդը 1873 թուին մի փորձ է արել վերահսկողութիւն կարգել այդ, Յախաց քարի վանքերի վերայ, բայց անյաջող, ըստ որում մի քահանայի, մի անգորանհատի վերահսկողութիւն չէր կարող Ալագեազ գիւղի բնա-

կիչներն աւերիչ ձեռքերից դուրս կորզել Յախաց քարի աւերակները, քանի որ ողբա նորանց անդի և արօտատեղերի մէջն են: Ապացոյց ասածիս որ հսկողութիւն վերակարգելուց յետոյ անգամ՝ մինչև իմ հետախուզութեանց ժամանակները, 1879 թուականի վերջը, յիշեալ վանքերը, ինչպէս վերը յիշած է, գեռ ևս գոմերի տեղ էին ծառայում Ալագեազցւոց ձիանց և հօտի համար:

Կարգեալ վերահսկողութիւնը հետեւեալն է:

« Ի փոխանորդէ թեմին՝ Նախիջլանու

« Աւագ քահանայի Էրտափին գեղջ ,

« Առաջագրութիւն : »

« Համաձայն հրամանի Սինօգի Սրբոյ Էջմիածնի, ի 28 ն Փետրվարի տարւոյս Պ 703, այսու կարգեմ զՁեզ կառավարիչ և վերատեսուչ Ղօշալանի, առ այս առաջարկեմ Ձեզ օգնութեամբ երեցփոխանի Ձեր և մելիք Կարապետի ջան ի գործ դնել յարդարել և մաքրել զյիշեալ վանս և ըստ կարեացդ ի շքեղութեան և ի պայծառութեան պահպանել զնա, նոյնպէս և հոգալ ի մասին հողոց և կալուածոց նորին որ և իցէ միջոցաւ հեռզհեռէ ի ձեռս բերել և արդիւնաւորել զնա օգնութեամբ և օժանդակութեամբ ժողովրդականաց կողմանցդ. ի 22 ն Մարտի 1873 ամի.

Փոխանորդ թեմին Նախիջլանու Թադէոս վարդապետ տէր Դանիէլեանց :

Այս կարգադրութիւնից անցած ամբողջ եօթն տարի, Նախիջլանի Հայոց հոգեւոր կառավարութիւնը նորից փորձեց կարգել վերահսկողութիւն նոյն Ղօշալանքի վերայ և այս անգամ պատուիրեց վերոյիշեալ՝ արդէն հանգուցեալ Տէր Աւագի որդի՝ նորընծայ Տէր Գրիգորին: Ահա յիշեալ պատճէնը:

« Ի հոգեւոր Կառավարութենէ Հայոց Նախիջլանի, Պ 182, յ8 Մայիսի 1879 թ:

« Գործակալին Էրտափինու.

Առ յայտարարութիւն Ձեր ի 1-ն Մայիսի տարւոյս և 16, հոգեւոր կառավարութիւնս պատուիրէ Ձեզ Ձերով ընտրութեամբ կարգել զմի ոմն ի վանս Ղօշալանից ի մշտական հսկողութեան իբրև վանահայր: Իսկ Դուք իբրև գործաչալ եկեղեցեաց կողմանցդ՝ կարէք հսկել իրաւանց վանօրէից գտանե-

լոց ընդ տեսչութեամբ Զերով և պաշտպանել զկալուածս շէն և անշէն վանօրէից առհասարակ որ ի Վայոց ձոր ի գալ երկրա-
չափից և քաղաքական աստիճանաւորաց, որոյ վասն այսու
տայ Զեզ զլիսիլին իրաւունս ի պաշտպանութիւն կալուածոց
վանօրէից կողմանցդ, որով և ունիք ցուցանել զժերմեռանդ
ծառայութիւն Զեր առ Մայր Աթոռն և զնոր իմն ապացոյց
տալ զխոհական և զարիաջան գործաւնութեանց Զերոց և
զհետեանաց երկրաչափից ի գործս վանօրէից անյապաղ ծա-
նուցանել կաւալարութեանս ։

« Նախագահ կաւալարութեան Գրիգոր վարդապետ.
Քարտուղար, Յ. Տէր Եսայեանց ։ »

Ինչ կասկած որ այս կարգադրութիւնն էլ մնաց ապարդիւն
հանգամանքների դժուարութեանց պատճառով ։

Յախացքարի վանքերի նախ քան հրաժարական ողջոյն ատ-
լը՝ դարձրէք ուշ և մի հանգամանքի վերայ ։ Կարգալով Ղօշա-
վանքի, այսինքն սուրբ Կարապետի, սուրբ Յոհաննու և սուրբ
Աստուածածնի եկեղեցիների արձանագրութիւնները, դժուար
թէ ոք կարող է երկբայել որ Յախաց քարը կամ Յաղաց քարը
եղել է այդ վանքերի բարձրաւանդակը ։ Սորա մասին սխալուամ
է Արքեպիսկոպոս Զալալեանի գիրքը, որ կտեսնենք փոքր ինչ
յետոյ ։ Բացի արձանագրական տեղեկութիւնները, Յախաց
քարի աշխարհագրական դիրքի վերայ մասնացոյց է անում և
Օրբելեան եպիսկոպոսը ։ Նա պատմելով Վարդանանց մնացոր-
դաց նահատակութիւնը Վայոց ձորում և շարունակելով Ոս-
տինքի և Արտաբոյնի ջրկիցից դէպի վեր, դէպի հիւսիս, պատ-
մումէ այսպէս. « Եւ անտի սակաւ մի անցեալ պարսկացն ի
ձորադուռն, որ ի ձախ կողմանէ որ հայի ի վեր յուխոն սուրբ
Յաղացքար կոչեցեալ, որ ի վերայ բարձրաւանդակին ի մէջ
սահմանաց երկուց գեղջն որ վերոյ ասացաք *) » ։

Եթէ կանգնենք Օրբելեանի յիշած ջրկիցի մօտ, այն է այժ-
մեան Ալագեաղ և Գիւմիւշքուլաղ գետերի խառնուելու կամ
Հոստուն գիւղի մօտ և նայենք դէպի հիւսիս, կամ դէպի Ալա-
գեազի բերդը, այն ժամանակ, արդարեւ երկու ձոր կտեսնենք
յիշեալ գետերի հոսանքով. մինը աջակողմեան Ալագեազի

(*) Օրբել. պատմ. նահ. Սիս. գլ. ԺԹ.

ձոր, իսկ միևսը ձախակողմեան, Երզափինի կամ Գիւմիւշբու-
լաղի ձոր, որի վերայ կախուած է Յաղացքարի բարձրաւան-
դակը, ուր կանգնած են Ղօշաւանքի աւերակները: Երզափինի
ձորը, Ղօշաւանքի սահմանում հինգերորդ դարում, մինչև
անգամ Օրբելեանի ժամանակ կոչուելիս է եղել Մարանի, այսինքն
ճայր անի ինչպէս հաւատարմացնումէ Սիսական նահանգի պատ-
մութիւնը *), որպիսի կոչում այժմ լիովին անյայտացած է:
Օրբելեանի խօսքերից նոյնպէս կարելի է եզրակացնել որ Ար-
տաբոյն գիւղը հին ժամանակներում եղել է ոչ թէ այժմեան
Երզափինի տեղը, այլ առաւել ցած, դէպի Զրկիցը, Հոստունի
մօտերը: Յաղաց քարի աշխարհագրական դիրքը ճիշտ որոշե-
լով վերջապէս ես թողնում եմ այդ հիպոթանշ բարձրաւան-
դակը և աստիճան առ աստիճան, քարքարոտ ճանապարհով
ուղղւում եմ դէպի հարաւ, դէպի Ալաբեաղի հայակապ
բերդը:

Ճանապարհիս վերայ, լեռան ուռուցիկ մէջքի վերայ, այն
տեղ, ուր յորդառատ աղբիւրի հոսանքը թեքւում է հրբմն
դէպի Ալաբեաղ և երբեմն դէպի Երզափին, հէնց այդ տեղ
նշմարւումէ մի կիսակործան հաստահիմն պարսպապատ, որ
յենուած իւր արեւելեան կողմի բուրգերի վերայ, ձգւում է
հիւսիսից հարաւ: Բէպէտ դա նման է մի պատնէշի, որ փա-
կում է ճանապարհի անցուղարձը, բայց տեղացիք պնդումն
որ դորա վրայով յիշեալ աղբիւրը հրբմն անցնելիս է եղել
դէպի հարաւ՝ բերդի սահմանը:

Հէնց այս պատնէշից սկսւում է բերդի բլուրը, որ ուղտի
մէջքի նման դէպի վեր բարձրացած, մի ահագին լեռնային գո-
տի է հիւսիսից դէպի հարաւ ուղղութեամբ: Բերդատարի հիւ-
սիսային մասը ծածկուած է խոտերով ու ծառերով, այն ինչ
հարաւային մասը, ուր շինած է ամրոցը, բուսցնում է իւր գա-
գաթում միայն խոտ և ցանուցիւր մացառներ: Իսկ սորա լան-
ջերը ուղղահայեաց և սոսկալի ժայռերով լիցնում են արեւելեան
կողմից դէպի Ալաբեաղի խոր ձորը, հարաւից դէպի Հոստուն
գիւղը և արեւմտեան կողմից դէպի Երզափին գիւղը:

Միակ ճանապարհը, որով կարելի է գնալ բերդը՝ դրած է

(*) Նոյն գլուխ:

բլուրի հիւսիսային մասում: Նոյն իսկ այդ ճանապարհն է որ հին ժամանակներում ծառայել է բերդին: Այդ ճանապարհը աստիճանաբար բարձրանում է Գիւմիւշքուլաղի ձախ ափից, հանքային ջրերից ցած, ապա բերդասարի հիւսիսային մասի արեւմտեան լանջով, մաշաոռների միջից մօտենում է բերդին: Հին ճանապարհը այս տեղ դեռ ևս չէ կորցրել իւր կերպարանքը, որ աւելի որոշ է բերդի մօտ: Գետակից փաք ինչ բարձրացած՝ ահա ճանապարհի մօտ երևում են մի քանի տների փլատակներ և սոցա սահմանում մի կանգուն խաչքար այս արձանագրութեամբ: «Թ. ՁԼԵ. (737—1288) Սարգիս քահանայ կանգնեցի զխաչս ի բարեխօսութիւն և յիշումն ննջեցելոց մերոց, որք յիշէք՝ ողորմեսցի Քրիստոս: »

Ահա մօտեցանք բերդի պարսպին, ուես ի՞նչ հոյակապ դարպասներ են և աշտարակներ: Ես իսկոյն մտաբերեցի Անի քաղաքի Սմբատայ պարիսպը, որ նոյնպէս հիւսիսից է պաշտպանում քաղաքը:

Ինչպէս վերը յիշեցի, Ալագեագի բերդի արեւելեան, հարաւային և արեւմտեան լանջերը ամրացած են ուղղահայեաց ժայռերով: Մտչելի և թոյլ կողմերն են հիւսիսային, հիւսիս-արեւելեան և հիւսիս-արեւմտեան մասերը, չենց այս թոյլ կողմերն էլ պաշտպանուած են հաստահիմն քարակառոյց կրաշագաղ պատերով, որոնց հիւսիս արեւելեան անկիւնը արդէն քանդուած է: Հիւսիսային պատի հաստութիւնը կլինի աւելի քան երկու սաժէն, իսկ միւս պատերի հաստութիւնը մի սաժէն: Այդ աղեղնաձև պարիսպը արտաքուստ ամրացած է տասն մեծ աշտարակներով: Պարսպի արեւմտեան մասը իւր արտաքին կողմից ունի և մի երկրորդական պատ, սրի վերայ Ջալալեանի գերբը սխալմամբ աւելացրել է և ելլող պարիսպը:

Բերդը ունի երեք կամարաշէն մեծ դարպասներ սրբատաճ քարից՝ արեւելեան, հիւսիսային և հիւսիս արեւմտեան կողմերում: Ամենից լայն, մեծ և բարձր է հիւսիսայինը, որ պէտքէ իւր ժամանակ լինէր աւագ դուռն և որի առաջ կան արդէն քանդուած քարէ աստիճաններ: Նորանից յետոյ մեծը արեւմտեանն է և ապա արեւելեանը: Հիւսիսային դարպասը ծածկած է եղել կրաշագաղ պատով, ինչպէս այժմ ցոյց են տալի հետքերը:

Գլխաւոր և յաճախակի գործածական գուռը եղել է հիւսիս արեւմտեանը, որի մօտ վերջանում է Գիւմիւշքուլաւից բարձրացող լայն ճանապարհը: Սակայն սորա կամարը արդէն քայքայուած է: Ամենից հազիւ գործածականը եղել է արեւելեանը, որ ուղղակի բացւում է ժայռի գլխին և չուրի յարմար ճանապարհ: Նրեք դարպասներն ևս ունեցել են երկվեղկեան դռներ, ըստ որում դռների չորս կրնկի փոսերը այժմ ևս երեւում են քարերի մէջ: Դռները փակուելիս են եղել ներսից հաստ գերանաձև նիգով, որի ներս ու դուրս անելու տեղը կայ պատերի մէջ: Բացի այդ, կամարի մէջ տեղ, ուր միանում են ծածկած փեղկերը, երեւում է ուղղահայեաց նեղ անցք, և գուցէ վերից վայր ևս փայտով փակւում էին դռները: Այժմ չկան ոչ դռների փեղկեր և ոչ նիգեր: Բերդի պարիսպը շարունակւում է երեք դարպասների գլխակամարի վրայից ևս, մինչև անգամ հիւսիսային դարպասի կամարի վերայ կառուցած է մի սենեակ, այժմ խոնարհուած:

Արեւելեան և հիւսիս-արեւմտեան դարպասների կամարի տակ կարմիր ներկով ձեակերպած է մի մի խաչ: Իսկ հիւսիսային դարպասի կամարի տակ, արեւմտեան պատի ճակատի վերայ դրած է կաւիճով « 1857 ամի Յոհաննէս Բաբայեան: » Այս ստորագրութիւնը մի ակնթարթում շարեց յիշողութեանս մէջ Յոհաննէս Բաբայեանի խօսակցութիւնը Դարալագեաղի վերաբերութեամբ: Ես դեռ Աղէքսանդրապոլում նորա խօսակցութեան ժամանակ չէի մտածում անգամ, որ ճակատագիրը կձգէ ինձ հայրենեաց այն հնութիւնների, ամրոցների, վանքերի և քարակոյտերի մէջ, ուր ուրիշ 19 տարի ինձանից առաջ նա արդէն պոտել է և ամեն տեղ թողել իւր հետքը:

Դեռ քանի դուրսը կանգնած նայում ես բերդի պարսպի և դարպասների վերայ, ակամայ կարծում ես թէ պարսպի ներսը, բերդի մէջ, բազմաթիւ զինուորներ աջ ու ձախ շարժուածքով պատերազմական կենդանի մարզումներ են կատարում: Իսկ երբ ոտքդ դնում ես դարպասից ներս՝ աչքիդ առաջ արձանատւում են ամայի լեռնագագաթ, սեպաձև ժայռեր, սենեակների փլատակներ, և խիտ առ խիտ քարակոյտեր: Համոզւում ես թէ ինչ եղել է հինգ կամ վեց դար առաջ այն՝ ինչ այժմ չկայ: Այն դարի ժողովուրդը թողել է մեզ միայն ներկայ փլատակները

և քարակոյտերը:

Յիշած սենեակներս քարաշէն՝ բայց ցխաշաղախ են ու դա-
սաւորուած են պարիսպներին կից ու նորանց երկարութեամբ:
Նոքա խոնարհուած են. եղել են առանձնակի, բայց կան և
այնպիսիք, որ երկու կամ երեք սենեակներ ունեցել են միմեանց
հետ հաղորդակցութիւն: Այժմ՝ նշմարելի բոլոր սենեակների
թիւը հասնումէ մինչև հարիւր ասի և երեք: Բերդի կէնդրո-
նում, մի բարձր ժայռի գլխին կան չորս միմեանց կից կրա-
պատ սենեակներ, որոնք գուդէ իշխանների համար են: Սոցա
մօտ կայ և մի կրապատ ջրամբար: Այս սենեակներից ոչ հե-
ռի, դէպի հիւսիս, մի սուր ժայռի ծայրում կանգնած է ե-
րեք պատով մի սենեակ, այսինքն առանց չորրորդ—հիւսիսային
պատի: Սա գուցէ եղած է դիպառնոյ, ըստ որում նորանից նայե-
լով՝ կարելի է մի ակնթարթում զննել բերդասարի արեւմը-
տեան և հիւսիսային մասերը նոցա բոլոր լանջերով և ստորոտ-
ներով և այնքան պարզ՝ որ ոչինչ թագչել չէ կարող: Հենց յի-
շեալ մասերն են թոյլ և մատչելի թշնամեաց համար, ուստի պէտք
էր զիտանոց:

Բերդի մէջ կանգնած՝ դուք զննեցէք ձեր հեռաւոր շրջա-
կայքը և հիացէք բնութեան տեսարաններով: Արեւելեան կող-
մը, խոր անդունդի մէջ, ընկած է Ալագեազի ձորը՝ նոյնա-
նուն գետով, որի հոսանքը իբրեւ արծաթէ ժապաւէն՝ երեւում
է և ալիքների ձայնը մերթ ընդ մերթ հասնում է ձեր ական-
ջին: Նորա աջ ափից մինչև բերդի ստորոտը ցանուցիր թա-
փուած են ահռելի քարակոյտեր և սոցա մէջ պարզ նշմարե-
լի են հին Եղեգնիսի տների և փողոցների հետքերը: Այս փլա-
տակներից փոքր ինչ վեր, նոյն ձորում, փնջանման դրած է այժ-
մեան Ալագեազ գիւղը իւր ծառերով, այգիներով և հին վան-
քերով: Գետի ձախ ափից բարձրանում է կուրծքը ծառերով
և սեպացած ժայռերով ծածկած Թեաքադոն դուրան լեա-
ռը: Նրջուեցէք դէպի արեւմուտ և ահա բերդասարի ստորո-
տում, նոյնպէս խոր ձորի մէջ, Գիւմիւշբուլաղի ափի վերայ,
կանաչ ծառերի մէջ դրած է Էրզափինը: Փոքր ինչ դէպի հիւ-
սիս սիզաւէտ լեռնահարթի վերայ Հորբաղին գիւղը և ա-
ռաւել դէպի հիւսիս բերդից աւելի բարձր դիրքի վերայ ցոյց
է տալի իւր սրածայր կաթուղիկէն Ղօշաւանքը: Կամենաք նա-

յել առաւել հեռու, այն ժամանակ Դարալազեազի ալեծածան դօտիների, սեպաձև ժայռերի և սոսկալի ձորերի տեսարաններից չէք դարձնել ձեր հայեացքը:

Սակայն թողնենք այդ տեսարանները և մեր տեղը, բերդի մէջ կանգնած, փոքր ինչ խորհենք սոյն այս բերդի մասին: Այս ի՞նչ բերդ է. ի՞նչ է ոտրա անունը, ո՞վ և ե՞րբ է շինել սորան, ի՞նչ յիշատակարան, ի՞նչ անցեալ, ի՞նչ պատմութիւն ունի սա և այլն: Ահա հարցեր արժանի ուշադրութեան և կարօտ լուծման: Բայց ո՞ր պատմաբանին կանչենք, ո՞ր վկային հարցնենք, ո՞ր աւանդութիւնը որոնենք կամ ո՞ր աղբիւրին դիմենք: Ես դժուարանում եմ պատասխանել: Եթէ բերդապարիսպը ունենար մի յիշատակարան, մի արձանագրութիւն, մի թուական, այն ժամանակ գուցէ մեր տարակուսանքը փարատուէր: Բայց ինչպէս վերը տեսանք, պարսպի կամ դարպասների վերայ կամ այլ տեղ արձանագրութիւն գտնելը ինձ համար անյաջող եղաւ: Միւս կողմից մարդու մէջ զարմանք է ծնանում թէ ինչպէս այդ հոյակապ բերդի շինողը կամ նորոգողը զանց է արել թողնել մեզ որ և է արձանագրութիւն, որով հին ժամանակները չէին զլանում դրոշմել նաև խաչքարերի, տապանաքարերի ճակատն անգամ, ուր մնաց թէ այդպիսի հոյակապ բերդի սյուրիսպները: Արձանագրութեանց աւելի յարմար տեղը դարպասների ճակատն է, բայց նա ևս բոլորովին կոկ է: Այնուամենայնիւ ենթադրել ուէտք է, որ գրութիւն եղել է և այժմ անհետացել է:

Արքեպիսկոպոս Ջալալեանի ճանապարհորդութեան գիրքը *) և Շօպէնը **) կարծում են որ դա Հրասէկ իշխանի շինած Հրաշափէրը է, որի մասին Օրբելեանի պատմութիւնը մի քանի անգամ յիշատակում է: Բայց Ջալալեանի գիրքը և Շօպէնը, որքան թոյլ է տալի ինձ կարծել իմ հետախուզութիւնը, ոխալուծած են և թեթեւութեամբ են նայել գործին: Իւր ժամանակը և իւր տեղը ես կաշխատեմ որոշել Հրաշկաբերդի աշխարհագրական տեղը պատմական փաստերին համաձայն, և առ այժմ միայն կասեմ որ Ալագեազի բերդը Հրաշկաբերդը չէ:

*) Ջալալ. Ճանապ. հ. բ. Երես 152.

**) Շօպէն Историч. памятникъ Армянской Области Երես 381

Թէպէտ դարաւագեաղի հայերը աւանդութեամբ անուանում են դորան Սեփարայ քերի, բայց ես չգիտեմ թէ ի՞նչ հիմք ունի այդ աւանդութիւնը և ո՞վ է Սմբատը:

Ջննցէք Օրբելեանի պատմութիւնը, որ շատ անգամ խօսելով այդ բերդի շրջապատ տեղերի վերայ, այն է Ոստինքի, Արտարոյնքի, Յախաբջարի և Եղեգնիսի վերայ և այդ շրջանակի կենդրոնում կանգնած ամուր բերդի մասին ամենեւին ոչինչ չէ յիշում, Ի՞նչ է պատճառը: Պատճառը այն է, իմ կարծիքով, որ այդ հոյակապ բերդը պէտքէ շինուած լինէր Օրբելեանի մահից, 1303 թուականից յետոյ: Ես երեւակայել անգամ դժուարանում եմ, որ Օրբելեանը կարողանար զանց առնել այդ հսկայ, իւր ժամանակ անմատչելի ամրոցը, եթէ նա կառուցուած լինէր նորա օրով:

Եւ այսպէս թէ ո՞վ է ընտրել այդ խրոխտ տեղը, ո՞վ է հիմնել բերդը և ե՞րբ, ի՞նչ չար ու բարի է անցել նորա գլխով, ի՞նչ անուն է կրել և այլն, ես այդ չգիտեմ:

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ.

ԵՐԵՔ ԾԱԾԿԱԳՐԵԱԼ ՆՈՐ ՆԱՄԱԿ

Մեր գիւտի դէմ՝ յարուցուած վէճերն այն մեծ օգուտն ունեցան, որ ծանօթացրին մեզ մի շարք նոր փաստերի հետ, որոնց մի մասը թէև ինքն ըստ ինքեան հերքւում էր ճիշտ քննադատութեամբ, բայց հիմքը՝ այն կէտը որ վերաբերում էր Հ. Այվազեանի առաջին գիւտին, մնում էր առկա, առանց գրական ապացոյցի, մանաւանդ որ իբրև հերքողական կային նամակներ, որ Հանգուցեալը չէր կարդացել, չկարողանալով կամ՝ աւելացնել, չկամենալով:

Այս իսկ պատճառաւ մենք ղգուշացել էինք վերջնական յլճիւ տալուց այն մասին թէ արդեօք Հանգուցեալը մեզնից առաջ կարդացել էր թէ ոչ որ և է ծածկագիր նամակ:

Այժմս անակնկալ կերպով պսակւում են մեր խուզարկութիւնները, և չսպասուած տեղից դուրս են գալիս հաւաստիք գրապէս ապացուցանող, որ Հանգուցեալ Այվազեան գտել է մեր կարդացած ծածկագրերի բանալին, մեզանից շատ առաջ, 1862 ին, և այս այնչափ աւելի դուրեկան է մեզ խոստովանել,